ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉԻ ՊԱՐԱԿԱՆՈՆ ՄԻ ՊԱՏԿԵՐ

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Միջնադարյան ձեռագրերը նկարազարդելիս ծաղկողները հետևելով կանոնական ձևերին, յուրաքանչյուր Ավետարանի սկզբում նկարել են այդ ավետարանիչի պատկերը։ Վաղ շրջանի ավետարաններում (IX—XI դդ.) կանոնական է համարվել պատկերել նաև չորս ավետարանիչներին միասին, կամ երբեմն երկու զույգով։

Կանոնիկ է համարվել նաև Ավետարանը սկսել անվանաթերթով։ Այն մեծ մասամբ զարդարված է լինում կիսախորանով, իսկ գրությունը սկսվում է զարդատառով, որը շատ հաճախ հանդիսացել է ավետարանիչի խորհրդանիշը։ Այդ խորհրդանիշը երբեմն էլ պատկերվել է ավետարանիչի հետ։ Մատթեոսի խորհրդանիշն է մարդը, որն ավանդաբար մեկնաբանվել է այսպես. Մատթեոսն իր Ավետարանում ընդգծում է Քրիստոսի մարդկային և փրկչական բնույթը։ Մարկոսի խորհրդանիշը առյուծն է, որն ընդգծում է Քրիստոսի զորեղությունը և իշխանությունը։ Ղուկասինը՝ եզն է, այսինքն նա վաստակասեր էր իբրև եզն և, վերջապես, Հովհաննեսի խորհրդանիշը՝ արծիվը, որը, ըստ Ավգուստինոսի մեկնության, «Արծվի նման սավառնում է մարդկային անզորություն ներկայացնող ամպերի վրա»[1]*. Ավետարանիչների խորհրդանիշների նման մեկնաբանումների կարելի է հանդիպել բազմաթիվ ձեռագրերում։ 1292 թ. ընդօրինակված ավետարաններից մեկում կարդում ենք. «Մարդն Մատթէոս վասնզի նա մարմնաւորութենէն տեառն մերոյ արար սկիզբն «Գիրք ծննդեան» ասելով. և Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս։ Եւ Առիւծն զՄարկոս, վասնզի նա առիւծաբար պատմեր զելսն Յիսուսի ի Յորդանանէ. Իսկ Եզինն դեմք՝ զՂուկաս, վասնզի նա իբրև եզն վաստակասէր էր եւ գործանի եղիալ ի հոգևոր մշակութիւն զաւեառն խորհուրդն կարգաւ պատմէ։ Իսկ Արծուին՝ զՅոհաննէս, վասնզի նա բարձրաթռիչ եղեալ ի վերուստ բարձառեցաւ ի հայրական ծնընդենէն»*[2]*։*

Հետագա դարերում ավետարանիչների պատկերների հորինվածքներում հիմնականում իշխում է հետևյալ ձևը. Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը պատկերվել են առանձին-առանձին՝ նստած գրակալի առջև, իսկ Հովհաննես ավետարանիչը մեծ մասամբ նկարված է իր աշակերտ Պրոխորի հետ։

Վերջերս Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում մեզ հանդիպեց մի Ավետարան, որտեղ Հովհաննես ավետարանիչը պատկերված է Գաբրիել հրեշտակի հետ կողք-կողքի կանգնած (ձեռ. № 5559, թ. 150բ)։ Սա մի հետաքրքրաշարժ տարբերակ է և, բնականաբար, ուշադրության արժանի, մանավանդ, որ նման այլ օրինակ մեզ ծանոթ չէ։ Այն ընդօրինակվել է 1273 թ. Պազարում (Պարսկաստան)։ Գրիչն է Առոմ քահանան։ Ըստ Մատենադարանի «Ցուցակ

---

[1] Ф. А. Брокгауз, Энциклопедический словарь. т. XI, СПб., 1893, с. 406.

[2] *Մատենադարան, ձեռ. № 4080, թ. 131ա։*

ձեռագրացի»։ Ծաղկողն անհայտ է, սակայն, հավանաբար, նկարազարդել է Մարտիրոս երեցը, որի մակագրությունը պահպանվել է Հովհաննես ավետարանիչի նկարի մոտ. «զՄարտիրոս երէցս յիշեցէք»։ Ձեռագրի հետագա հիշատակարանից տեղեկանում ենք, որ 1554 թ. Ավետարանը գերեվարվել է Բուրբերի կողմից և տարվել Վան, որտեղ տանուտեր Պապաջանը ձեռագիրն ազատել է գերությունից և նվիրել տեղի սուրբ Սահակ եկեղեցուն։

Ձեռագիրն ունի երեք ավետարանիչների նկարներ. Մարկոս, Ղուկաս և Հովհաննես։ Բացակայում է Մատթեոս ավետարանչի նկարը, որը պոկված է։ Ունի նաև գլխագարդեր, խորաններ ու լուսանցազարդեր, հյուսվածքագրեր։ Նկարները գունազարդելիս նկարիչն օգտագործել է բոլոր հիմնական գույները, առանց ոսկու։ Ավետարանիչների նկարներն ուշագրավ են իրենց ժամանակի համար ո՛չ բնորոշ հորինվածքներով։ Նրանք բոլորն էլ կանգնած են դիմահայաց և, ինչպես պատկերում էին վաղ շրջանի ավետարաններում, ձեռքերում պահել են արդեն ավարտված ձեռագիրը։ Պատկերները կատարված են մոնումենտալ-դեկորատիվ ոճով, հագուստները՝ ոչ սովորական-ավետարանչական։

Հովհաննես ավետարանիչը, ինչպես ասացինք, պատկերված է Գաբրիել հրեշտակի հետ։ Վերջինս մի ձեռքով պահել է ցեղան, իսկ մյուսը մոտեցրել է Հովհաննեսի բերանին։ Առաջին հայացքից թվում է, թե Գաբրիելը փսխել է Հովհաննեսի բերանը, սակայն փորձենք գտնել ավելի համոզիչ մեկնություն։

Հովհաննեսի Ավետարանում Գաբրիել հրեշտակի մասին չի ակնարկվում։ Նա սուրբ գրքերում հիմնականում հանդես է գալիս. ա) որպես Դանիել մարգարեի տեսիլքների մեկնիչ (Դան. Ը, 16, թ. 21), բ) որպես Զաքարիային Հովհաննես Մկրտչի ծնունդն ավետող (Ղուկ. Ա, 11, 19), գ) որպես Մարիամին Քրիստոսի ծնունդն ավետող (Ղուկ. Ա, 26—38)։

Մանրանկարչության մեջ այս վերջինս մուտք է գործել կանոնական-տերունական պատկերագրությունում, «Ավետումն» նկարիչները Մարիամին ու Նրան ավետող Գաբրիելին պատկերել են միասին։ Հայտնի է նաև Քրիստոսի երկրորդ գալուստը փողհարող Գաբրիելի կանոնիկ պատկերը։ Սակայն հետաքրքրական է, թե վերը հիշված ձեռագրում Հովհաննես ավետարանիչի հետ Գաբրիելին պատկերելու նկարից բացի, տերունական նկարների ի՞նչ տարբերակներ կան, որոնցում ներկա է Գաբրիելը։

«Գիրք տղայության Քրիստոսին» պարականոն պատմության մեջ հիշատակվում է, որ Գաբրիել հրեշտակը Մարիամին ավետելուց հետո «Եւ նոյն ժամայն հրեշտակ Տեւսոն ընթացեալ գնաց ի կողմանս Պարսից և աւետիս եհար մոգաց թագաւորացն՝ գալ նոցա յերկրպագութիւն նորածին մանկանն»[4]։ XIII դ. հայկական ձեռագրերից մեկում, որն ընդօրինակվել է Հռոմկլայում և գտնվում է Ֆրիերի հայերեն ձեռագրերի հավաքածուում[5], կա մի նկար, որտեղ պատկերված է, թե ինչպես հրեշտակը մոգերին առաջնորդում է Աստվածամոր մոտ։ Բյուզանդական աղբյուրներում նույնպես հանդիպում են IX—

---

[4] «Բառարան սուրբ գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 103։

[5] «Անկանան գիրք Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1898, էջ 15։

[5] S. Der-Nersessian. Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, Washington, 1963, ms. 32—18, fig. 60.

XII դդ. մանրանկարներ ու խճանկարներ, որոնցում արտահայտված է նույն միտքը[6]։

1261 թ. Վախտանգ Խաչենցու համար ընդօրինակված Ավետարանում (ձեռ. N 378) կա ուշագրավ մի նկար, որտեղ պատկերված է Մարիամը՝ մանուկ Քրիստոսը գրկին, իսկ նրա կողքին՝ թևերը լայն տարածած և ձեռքերը կողմ մեկնած, կանգնած է Գաբրիել հրեշտակը, որը, կարծես, ավետում է Քրիստոսի ծնունդը, բայց ոչ թե մոգերին, այլ ներքևում կանգնած դույզ ավետարանիչներին։ Խաչենի Ավետարանի այս նկարը հիշեցնում է զպտական մի գործվածք, որտեղ մանուկը գրկին նստած Տիրամոր դիմաց կանգնած է լուսապսակով մի կերպար՝ մի ձեռքը բարձրացրած, իսկ մյուսում՝ գիրք։ Ֆորքերն այդ տեսարանը նկարագրում է այսպես. «Մարիամը մանուկ Հիսուսի հետ ունկնդրում է մի բարեսպաշտի[7]։ Վերջինիս մասին Սիրարփի Տեր-Ներսեսյանը գրում է. «Կանգնած ֆիգուրը, թվում է, թե թևեր ունի և հավանաբար հրեշտակ է»[8]։

Ըստ կանոնական պատկերագրության, ծննդի տեսարանում ներկայացվում է նաև մանուկ Քրիստոսին լողացնելու արարողությունը, որտեղ, սովորաբար, կանանցից մեկը լողացնում է մանկանը, իսկ մյուսը՝ ավելի երիտասարդ կինը, ջուր է լցնում։ Բայց, ահա, Վիեննայի X դ. հայկական ձեռագրերից մեկում անհայտ նկարիչը պատկերել է, թե ինչպես Հիսուսին լողացնելու պահին նրան է մոտեցել հրեշտակը, որի ձեռքում կա իշխանության, տերության խորհրդանիշ գունդը, որը մեկնել է մանկանը[9]։ Այստեղ արտահայտված է նորածին Քրիստոսին իշխանություն, իրավունք տալու գաղափարը։ Նույն ձեռագրի «Մկրտություն» պատկերում նման գունդ ձեռքերում պահած ունեն Միքայել և Գաբրիել հրեշտակները, որոնք այն դարձյալ մեկնել են Քրիստոսին[10]։ Այս ոճը հանդիպում է դեռևս VII դ. բյուզանդական խճանկարներում, որոնցից մեկում պատկերված է Աստվածամայրը մանկան հետ, իսկ նրա երկու կողմերում՝ Գաբրիել և Միքայել հրեշտակները, ձեռքերին իշխանության գունդը[11]։ Նման միտք արտահայտված է XIV դ. Վասպուրականի մանրանկարիչ Կիրակոս Խաղբակեցու պատկերած «Աստվածամայրը մանկան հետ» հորինվածքում, որտեղ Մարիամի երկու կողմերում կանգնած են նրան փառաբանող Գաբրիել և Միքայել հրեշտակները։ Ձեռագիրը Խաղբակեցին նկարազարդել է Կիլիկիայում եղած ժամանակ[12]։ XIII դ. մի Ավետարանում ծաղկող Ովանեսը «Մկրտություն» մանրանկարում Հովհաննես Մկրտչի գլխավերևում պատկերել է Գաբրիել հրեշտակին, որը ավետում է Քրիստոսի մկրտությունը։ Ուշագրավ է նաև «Ննջումն Աստվածամոր» նկարում Գաբրիել հրեշտակի հան-

---

6 Gertrud Schiller, Iconography of Christian Art, vol. I, London, 1966, pl. 268—270.

7 Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 47։

8 Նույն տեղում։

9 Հայրե և Հելմուտ Բուշհաուզեն, Նկարազարդ հայկական ձեռագրեր Միխիթարյան միաբանության ի Վիեննա, Վիեննա, 1978, նկ. 13։

10 Նույն տեղում, նկ. 14։

11 W. F. Volbach, J. Lafontaine, Dosogne, Byzanz und der Christliche Osten, Berlin, 1968, Abb. 9.

12 Մատենադարան, ձեռ. № 2745, թ. 6բ։

13 Մատենադարան, ձեռ. № 4820, թ. 2բ։

դես գալը։ Այստեղ, սովորաբար, ընդունված է պատկերել Աստվածամոր հոգին Քրիստոսի ձեռքերում։ Բայց ահա Վասպուրականի մանրանկարիչ Սերուն Եաղկողը 1391 թ. իր ընդօրինակած Ավետարանում (ձեռ. № 8772, թերթ 3ա) պատկերել է Աստվածածնի հոգին՝ ճախրող Գաբրիել հրեշտակի ձեռքերում, որը դարձյալ նույն հոգու սնմահության միտքն է արտահայտում։ Կարելի է բերել նման բազմաթիվ այլ օրինակներ։

Բերված օրինակները ցույց են տալիս, որ միջնադարյան հայ մանրանկարչության մեջ կան Գաբրիել հրեշտակին վերաբերող բազմաթիվ տարբերակներ, որոնց մեջ նա առավելապես հանդես է գալիս որպես ավետող, փառաբանող, ներշնչանք կամ իշխանություն տվող։

Հովհաննես ավետարանիչը և Գաբրիել հրեշտակը։

Քննվող Ավետարանում Հովհաննես ավետարանիչի հետ Գաբրիել հրեշտակի հանդես դալը պետք է, հավանաբար, բացատրել այսպես. Գաբրիելը ավետում, փառաբանում է ավետարանիչին և խոսելու իրավունք է տալիս։ Սակայն այստեղ մի նոր հարց է ծագում. իսկ ինչու՞ հատկապես Հովհաննես ավետարանիչի մոտ է նկարված Գաբրիելը։

Ինչպես հայտնի է, դեռևս երկրորդ դարի երկրորդ կեսին չորս ավետարաններ դարձել են հեղինակավոր, այսինքն համարվել են կանոնական։ Մոտ 180 թ. Լիոնի եպիսկոպոս Իրինեոսը հիշատակում է չորս ավետարանների

ավանդական հեղինակներին՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես։ Սակայն Հովհաննեսի Ավետարանն իր բովանդակությամբ տարբերվում է առաջին երեք ավետարանիչների՝ Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի համապատմողական (սինոպտիկական) ավետարաններից, որոնցում պատմվում է Քրիստոսի երկրային կյանքը։ Հովհաննեսի մոտ ներկայացված է Քրիստոսի աստվածային վարդապետությունը և այդ պատճառով նա անվանվել է նաև «Աստվածաբան». այս առումով հետագայում նրան երբեմն առաջնություն է տրվել։ Բացի այդ, դեռևս XIII դ. վերջին, այսինքն երբ ընդօրինակվել է մեր ներկայացրած Ավետարանը, արևելքում իշխում էր կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը և XIV դ. Հայաստանում տարածվեց ունիթորական խմբի գործունեությունը։ Այդ կրոնադավանաբանական հարցերի շուրջ առաջացած տարաձայնություններին իբրև պատասխան վկայակոչվում էր նաև Հովհաննես ավետարանիչը։ Այսպես՝ 1250 թ. Հռոմեական եկեղեցին հայոց Կոստանդին կաթողիկոսին ուղղած իր թղթում հայտնում էր, որ պետք է «Սուրբ Հոգու բխումն ընդունել ո՛չ միայն Հորից, այլև Որդուց»[14]։ Այդ առթիվ 1251 թ. գումարված Սսի Գ ժողովը, մերժելով կաթոլիկական դավանաբանական այդ տեսակետը և հիմք ընդունելով սուրբ գրքերն ու եկեղեցական վարդապետներին, պատասխանում է. «Սուրբ Հոգին բխում է Հորից և Որդուով (կամ՝ Որդուց, Որդու ձեռքով) երևում է»[15]։ Հովհաննեսի Ավետարանում, որը նույնպես վկայակոչվեց, կա հետևյալ արտահայտությունը. «զՀոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ» (Հով. ԺԵ, 26)։ Կիրակոս Գանձակեցին անդրադառնալով այս հարցին, գրում է. «Այսպիսի խոստովանութիւնս ընդունելի է յեկեղեցիս Հայաստանեայց և յոգիս Կիրակոսի և համարձակ արժան է քարոզել զՀոգին ի Հօրէ եկեալ և յՈրդւոյ երևեալ»[16]։ Եվ ապա, նա վկայակոչում է. «Եւ Յոհաննէս աւետարանիչ ասէ. Որ զՀոգին Քրիստոսի ոչ ունի, նա չէ նորա»[17]։ Նաև այս էր պատճառը, որ Հովհաննես ավետարանիչի հեղինակությունը XIII—XIV դդ. ավելի բարձրացվեց՝ օգտագործվելով կաթոլիկների դեմ։ Ահա թե ինչու մեր այս Ավետարանում նկարիչը Հովհաննեսին պատկերել է Գաբրիել հրեշտակի հետ։

Կան փաստեր, որ դեռևս XI դ. Նոր Կտակարանը երբեմն սկսվել է Հովհաննեսի Ավետարանով[18], որին անդրադառնալը մեր նպատակից դուրս է։

XIV դ. Գլաձորի դպրոցի մանրանկարիչ Մոմիկն իր ընդօրինակած ավետարաններից մեկը սկսել է դարձյալ Հովհաննեսի Ավետարանով[19] և դա ոչ թե պատահական, այլ, ինչպես նկատել է արվեստաբան Արամ Ավետիսյանը, «նման տեղաշարժ արել է ոչ վերականգնողը, քանի որ Հովհաննեսի վերջին տողերից անմիջապես հետո, նույն էջում, սկսվում է Մատթեոսի Ավետարանը»[20]։ Ավետիսյանի կարծիքով դա, թերևս, արված է կրոնազաղափարական

---

14 Ա. Զամիրյան, Հայ եկեղեցու պատմություն, հ. Ա. Նոր Նախիջևան, 1908, էջ 247։

15 Նույն տեղում։

16 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 333։

17 Նույն տեղում, էջ 230։

18 Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, Վիեննա, 1922, էջ 32։

19 Մատենադարան, ձեռ. № 6792։

20 Ա. Ավետիսյան, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971, էջ 58—59։

պայքարի շահերից ելնելով, երբ անհրաժեշտություն է զգացվել բարձրացնել Հովհաննես ավետարանիչի հեղինակությունը։ Եվ իսկապես. այն ժամանակ, երբ Գլաձորի դպրոցի աշակերտ Հովհաննես Քռնեցին, փոխելով իր դավանանքը, ղեկավարում էր ունիթորական շարժումը, նույն դպրոցի արվեստագետ Մոմիկը ի պատասխան Քռնեցու, բարձրացնելով Հովհաննես ավետարանիչի դերը, նրա Ավետարանը դրեց ձեռագրի սկզբում։ Նման երևույթ նկատվում է նաև հետագա դարերի մանրանկարներում։ Այսպես. 1607 թ. Կարինում ընդօրինակած Ավետարանում[21] ծաղկող Առաքելը «Ջորեքկերպյան աթոռ» տերունական նկարում Քրիստոսի աջ և ձախ կողմերում, որպես բարեխոսներ, պատկերել է Աստվածամորը և Հովհաննես ավետարանիչին։ Մինչդեռ, սովորաբար, որպես այդպիսին պատկերվել են Աստվածամայրը և Հովհաննես Մկրտիչը։

Այսպիսով, XIII—XIV դդ. Հովհաննես ավետարանիչը հատուկ տեղ է գրավել հայ մատենագրության և մանրանկարչության մեջ՝ կապվելով դավանաբանական պատկերացումների հետ։ Ուստի, քննվող պատկերը պետք է դիտել որպես այդ պատկերացումների յուրատեսակ դրսևորումներից մեկը։ Ավելի կոնկրետացնելով մեր միտքը, կարող ենք ասել, որ Գաբրիել հրեշտակը տվյալ մանրանկարում ցնծղայի ագդարարությամբ ընդգծում է Հովհաննես ավետարանիչի շուրթերից դուրս եկած խոսքի կարևորությունը։

АПОКРИФИЧЕСКОЕ ИЗОБРАЖЕНИЕ ЕВАНГЕЛИСТА ИОАННА

АСТХИК ГЕВОРКЯН

Резюме

Рукопись Матенадарана № 5559 (Евангелие 1273 года) содержит апокрифическое изображение евангелиста Иоанна, где он представлен вместе с архангелом Гавриилом. Последний на изображении приблизил ко рту евангелиста руку, как бы прикрывая его. Исследование показало, что данное изображение связано с религиозно-догматическими спорами. Как известно, в конце XIII в. на Востоке усилилась католическая пропаганда, а в XIV в. в Армении широкое распространение получило движение так называемых униторов.

В развернувшихся ожесточенных религиозно-догматических спорах сторонники официального национального вероучения приводили нередко цитаты из Евангелия от Иоанна, в котором представлено божественное начало Христа. Архангел Гавриил в данной миниатюре своим жестом, сопровождаемым игрой на кимвале, как бы подчеркивает важность слова евангелиста Иоанна.

---

21 Մատենադարան, ձեռ. № 10805, թ. 40ա։